ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ **« 10 » փետրվարի 2026թ.**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 2

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026թ. ութերորդ նստաշրջանի՝ փետրվարի 10-ին, ժամը՝ 12:00-ին հրավիրված հերթական նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի պաշտոնական յութուբյան ալիքով և ֆեյսբուքյան էջով:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասներեք անդամները, բացակա էին՝ Վանո Չատինյանը և Կարլեն Վերմիշյանը:

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ՝ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

Ավագանին որոշեց՝ հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի ութերորդ նստաշրջանի առաջին նիստի՝ փետրվարի 10-ի նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026 թվականի ութերորդ նստաշրջանի առաջին նիստի՝ փետրվարի 10-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման հաշվետվությունը հաստատելու մասին:

4) Հայաստանի համայնքների միությանը անդամավճար փոխանցելու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

6) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2026թվականի ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 6-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, ինչպես նաև հաշվի առնելով 03.02.2026 թվականին կայացած հանրային լսման արձանագրությունը՝

Ավագանին որոշեց՝ հաստատել Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 7-Ն

Հավելվածը կցվում է:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին կետով, ինչպես նաև հաշվի առնելով 03.02.2026 թվականի կայացած հանրային լսման արձանագրությունը՝

Ավագանին որոշեց՝ հաստատել՝ Լոռի Բերդ համայնքի 2025 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 8-Ն/

Հավելվածները կցվում է:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆԸ ԱՆԴԱՄԱՎՃԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 24-րդ կետով՝

Ավագանին որոշեց՝ Հայաստանի Համայնքների Միությանը Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի բյուջեից փոխանցել 115.000 (մեկ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ՝ (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ, դասակարգում 01 06 01 հոդված 4819) Լոռի Բերդ համայնքի բնակիչների անդամավճարի համար:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 9-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Էդուարդ Մելիքսետյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 82.1 հոդվածով, 18-րդ հոդվածի 4.1 և 35-րդ հոդվածի 1-ին մասի 3.1 կետերով՝

Ավագանին որոշեց՝ հաստատել՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2026 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 10-Ն/
Հավելվածը կցվում է:

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեկ./Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 24-րդ կետով՝

Ավագանին որոշեց՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու ութերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2026 թվականի մարտի 10-ը, ժամը՝ 12:00-ն:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:
Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 11-Ա/

Նիստի փակում:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի
Խալաթյան Ավետիք Հարությունի
Պապիկյան Վահրամ Ռոմիկի
Շահնազարյան Թամարա Էդիկի
Պապյան Հարություն Միշիկի
Չիբուխչյան Արման Հրաչիկի
Ներսեսյան Իրինա Վազգենի
Սիմոնյան Անահիտ Բաբկենի
Մարգարյան Սիլվա Ստեփանի
Գրիգորյան Աննա Հրայրի
Սերոբյան Անի Սամվելի
Գևորգյան Միշիկ Մարտիկի
Ասրյան Աննա Տիգրանի

Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝

Արայիկ Ներսիսյան _____

Միայնը արձանագրեց՝ Անի Մարտիրոսյանը

Կ.տ.